

«ՍԻՒՍ»-Ի ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁԸ

Հայ գրականության մեջ «սիւս» բառը հիշատակված է միայն Փավստոս Բուզանդի մոտ, ընդամենը երեք անգամ, հետևյալ երեք նախադասությունների մեջ.

«Եւ իր բանակ թագաւորին 'ի Դահապիվանի 'ի բուն բանակի տեղսն Արշակունեացն 'ի անբոյ Սիւսեացն և 'ի վերոյ ասպարիսացն»¹։

«...առի գնացի գփնէլ, տարայ մինչև յորմ Սիւսին, սպանի և անդէն թաղեցի»²։

«Իսկ զպատանեակն Գնէլ առնուին զնային մօտ ի Սիւսն արքունի, և անդէն կառափէին թ սարակ լերինն, որում տեղւոյն Նսին անուանեալ է, մօտ յորմածս արգելոցացն որսոյն երիտ-ցնն, ընդդէմ մուրտաստանին աղբերացն բազմոցացն արքունի, յանդիման բանակատեղ բնին»³։

Այս երեք նախադասությունների մեջ էլ «սիւս» բառը գրիչների թույլ տված սխալների պատճառով հանգես է գալիս որպես հասուկ անուն։

Ակադ. Ստ. Մախասյանցի վկայությամբ, այս բառով զբաղվել է նախ Եղիշե Մատթեոսը և գտել, որ «սիւս» պետք է նշանակի «պարսպապատ որսատեղ»⁴։ Անկախ Եղիշե Մատթեոսից, ակադ. Հր. Աճառյանը նույնպես, ուսումնասիրելով վերոհիշյալ երեք նախադասությունները և հենվելով հատկապես երրորդ նախադասության վրա, եզրակացնում է, որ «սիւս» բառը տվյալ նախադասության մեջ բացատրության կարգով տրված է նրա երկրորդ մասում՝ «արգելոց որսոյ երիտցն» ձևով։ Հր. Աճառյանը այնուհետև բացատրում է, թե ի՞նչ պետք է նշանակի «արգելոց որսոյ երիտցն» կոչվածը։ Հենվելով Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» երրորդ գլուխի իններորդ գլխի այն բացատրության վրա, թե արգելոցը պարսպով շրջապատված ժի արհեստական անտառ է, որտեղ երբեմն զվարճանում են թագավորն ու իշխանները՝ որոտով զբաղվելով, եզրակացնում է, որ «սիւս»-ը հենց այդ որսատեղն է⁵։ Ուստի իր «Հայերեն ար-մատական բառարան»-ում «սիւս» բառի զիմաց գրում է. «Չորս կողմը պատ քաշած արհեստա-փան մեծ որսատեղ»⁶։

Սակայն, քննելով բնագիրը, գտվար է համաձայնվել «սիւս» բառի այսպիսի ստուգաբանու-թյան հետ։ Տվյալ ստուգաբանությունն ընդունողը ակամայից պետք է ընդունի նաև, որ հիշյալ նախադասության երկրորդ մասում իզուր կրկնվել է նախադասության առաջին մասի իմաստը, մի կրկնություն, որը բոլորովին անտրամաբանական է։ Այդ միանգամայն պարզ կլառնա, եթե փոքրձեք հիշյալ նախադասության մեջ «սիւս» բառը փոխարինել նրան իբրև թե համապատաս-խան «արգելոց որսոյ երեսցն» բառերով։ Մեր կարծիքով հիշյալ նախադասության երկրորդ մասը բոլորովին էլ «սիւս» բառի բացատրությունը չէ։ այլ այնտեղ ասված է, թե որտեղ է գտնվում Նսին բլուրը։ Հետևաբար, «սիւս»-ը ինչ որ այլ շինություն պետք է լինի։

Փավստոս Բուզանդը իր գրքի երրորդ գլուխի իններորդ գլխում, խոսելով Գառնիից մինչև Դվին ձգվող ձեռատունկ անտառի մասին, հիշում է, որ նույն տեղում շինվեցին նաև արքունական ապարանքներ։ Եվ քանի որ սովորություն կար որսորդության համար պատրաստած ձեռատունկ անտառի մոտ արքունական ապարանքներ կառուցել, ապա բնական է, որ Արշակն

¹ Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1912 (կազմի վրա՝ 1913), էջ 182։

² Նույն տեղում, էջ 185։

³ Նույն տեղում, էջ 187։

⁴ Նույն տեղում, նրկան, 1947, էջ 326, ծանոթ. 107։

⁵ Հր. Աճառյան, Բուզանդի «սիւս» բառը, ՀՍՍՌ Գիտական համալսարանի գիտական օգնական, 1925, 1, էջ 169։

⁶ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 6, էջ 239։

էլ Շահապիվանի արգելանոցի մոտ պետք է կանգնեցնեն իր արքունական ապարանքները: Հենց այսպիսի շինություններն են, որ կոչվել են «սիւս»:

Մեր այս կարծիքը որոշ չափով հաստատում է նաև այն, որ երբ խոսվում է քանակի տեղադրման մասին, «սիւս»-ը հիշատակվում է հոգնակի, իսկ երբ խոսվում է Գնեիի «պանություն» մասին, «սիւս»-ը հիշատակվում է եզակի: Ծվ իրոք, քանակը կարող էր մի քանի ապարանքներից ներքև լինել, բայց Գնեիին հնարավոր չէր մի քանի ապարանքի պատի տակ սպանել: Ուստի վիրահիշյալ երեք նախադասությունները մենք առաջարկում ենք թարգմանել այսպիսի.

«Թագավորի քանակը գտնվում էր Շահապիվանում, Արշակունիների բուն քանակատեղում ապարանքներից ներքև. ձիարշավարանից վերև»:

Այս ապարանքներից մեկի մոտ է, որ սպանում են Գնեիին.

«...Գնեիին առա տարա մինչև ապարանքի պատի տակը, սպանեցի և նույն տեղում թաղեցի»:

Երրորդ նախադասության մեջ դարձյալ հիշելով Գնեիի սպանության մասին, Բուզանգը բացատրում է, թե որտե՞ղ է գտնվում այդ ապարանքը.

«Իսկ պատանի Գնեիին առնում տանում էին արքունի ապարանքի պատի մոտ և այնտեղ գլխատում էին լեռան մի բլուրի վրա, որի տեղը Հսին է կոչվում (որը գտնվում է) որսի երեւների արգելոցի պատի մոտ, մուրտաստանի, աղբյուրների, արքունի բազմոցների դեմ (և) բուն քանակատեղի դիմաց»:

Տվյալ նախադասության «բազմոց» բառը ըստ ակադ. Հր. Աճառյանի նշանակում է «եստե. լու պատվավոր տեղ»¹, իսկ «մուրտենի» (որից՝ «մուրտաստան») ըստ ակադ. Ստ. Մալխասյանցի, մի տեսակ մշտագալար թուփ է, որն ունենում է կոթավոր սպիտակ ծաղիկներ, տանձաձև փոքր կապտագույն սև պտուղ, որի ծայրը պատած է բաժակով. բույր մասնը համեմունքի հոտ ու համ ունեն. տերևներից ու ճյուղերից պսակներ են հյուսում², Հավանաբար, Արշակ թագավորը ձիարշավարանում կազմակերպում էր նաև մրցություններ, իսկ հաղթողներին վարձատրում ոչ միայն թագավորական գանձարանից, այլև պսակում մշտագալար մրտենու պսակով:

Մի քանի խոսք «սիւս» բառի ծագման մասին:

Su-ի բառի մասին ուրարտագետները մինչև վերջերս ընդհանուր եզրակացության չէին եկել: Ակադ. Գր. Ղափանցյանը SUSI-ն թարգմանում է «դուռ»³, Պրոֆ. Գ. Մելիքիշվիլին այն համարում է պաշտամունքի շինությունների ինչ որ տեսակի անուն⁴:

Թե ինչ է SUSI-ն պարզվեց միայն վերջերս:

1956 թ. օգոստոսի 11-ին, Արինքերդի պեղումների ժամանակ բացվեց մի շենք, որը կոչվում էր SU-ի. Մ. Խորայեւյանը, քննության առնելով պեղված շենքը և նրա մուտքի երկու կողմերում գտնված քառաքի նույն բովանդակություն ունեցող երկու արձանագրությունները, գտավ, որ SU-ի-ն ուղղանկյուն տաճար է, որը նվիրվել է որևէ գլխավոր աստծու:

Մենք կարծում ենք, որ հենց այս SUSI-ն է. որ Փավստոս Բուզանգի մոտ հիշատակված է «սիւս» ձևով, մի տարբերությամբ միայն, որ հայերենում այն հանդես է գալիս որոշակիորեն իմաստափոխված և նշանակում է արդեն ոչ թե «տաճար», այլ «ապարանք»: Նույն այսպիսի էվույուցիա է ապրել նաև հենց ինքը «տաճար» բառը, որը կորցնելով իր նախկին կրոնական բնույթը, արդի հայերենում հատկացվում է տաճարների նման փառահեղ ու վեհաշուք կառուցվող ապարանքներին: Ահա այստեղից էլ այն տարբերությունը, որ կրոնական նշանակություն ունեցող ուրարտական SUSI-ն հայերենում, հանդես գալով «սիւս» ձևով, նշանակում է «ապարանք»:

¹ Հր. Աճառյան, Հայերեն արժատական բառարան, հատ. 1, էջ 861:

² Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. 3, էջ 377:

³ Գր. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, էջ 72:

⁴ Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, «Вестник древней истории», 1954, № 1, стр. 215.

⁵ Մ. Խորայեւյան, Արինքերդի SUSI տաճարը և նրա արձանագրությունները, ՀՍՍՌ ՊԱ ՏՃԵԳԵԿԱԳԻՐ, 1957, 9, էջ 94: